

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հ. Ղեոնդ Ալիշան, *Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1860:*
2. Լ. Ա. Բարսեղեան, *Հայ ժողովրդի ծագման եւ կազմավորման հարցերը պատմագիտութեան մէջ, Երեւան, 1996:*
3. Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն, Երեւան, 1981 («Հայկ եւ Բէլ» առասպելի շուրջ տե՛ս նաեւ Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 479-480. Բ. Ն. Առաքելեան, Գ. Բ. Ջահուկեան, Գ. Խ. Սարգսեան, Ուրարտու-Հայաստան, Երեւան, 1988, էջ 110-114. Վ. Խաչատրեան, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դդ., Երեւան, 1998, էջ 22-24, 81. Ս. Գ. Հմայեակեան, Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիրքա քաղաքը Նիքորի լեռներում, ՊԲՀ, թիւ 1, 1992, էջ 125-132):*
4. Ա. Մովսիսեան, *Բարեպաշտ արքաների աշխարհակալութիւնը. հարիւրամեայ կայսրութիւն Տիգրան Մեծից առաջ, Երեւան, 1997, էջ 24-25:*
5. Թովմայ Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն Արծրունեաց տան, Երեւան, 1978:*
6. Ա. Ղանալանեան, *Աւանդակապատմ, Երեւան, 1969, էջ 72-73:*
7. Բ. Թումանեան, *Տոմարի պատմութիւն, Երեւան, 1972:*
8. *Մանրամասնութիւնները տե՛ս Բ. Թումանեան, Տոմարի պատմութիւն, Երեւան, 1972:*
9. Է. Խանգաղեան, *Հայկական լեռնաշխարհի մշակոյթը մ.թ.ա. III հազ., Երեւան, 1967:*
10. Дж. Мелларт, *Торговля и торговые пути между Северной Сирией и Анатолией (4000-1500 гг. до н.э.), см. в книге Древняя Эбла: Раскопки в Сирии, М., 1925.*
11. Г. Меликишвили, *Возникновение Хетт-*

- ского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии, Вестник Древней Истории (ВДИ), 1965, 1, ст. 23-24.
12. Т. Гамкрелидзе, В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы, часть II, Тбилиси, 1984, ст. 893-895. В. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агнуй, ՊԲՀ, թիւ 4, 1983, էջ 22-43:*
13. Արմանի երկրի տեղագրութեան վերաբերեալ տե՛ս նաեւ Ա. Մովսիսեան, *Սրբազան լեռնաշխարհը, Երեւան, 2000, էջ 43-46. Վ. Մատթէսեան, Սեպագիր աղբիւրներու Արման երկիրը, Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1994, էջ 255-268:*
14. Ն. Աղոնց, *Հայաստանի պատմութիւն, Երեւան, 1972:*
15. Նոր Հայկագեան Բառարան, *հտ. Բ, Երեւան, 1981, էջ 913:*
16. Թագաւորների գործունէութեան վերաբերեալ մանրամասնութիւնները տե՛ս Joan Oates, *Babylon, 1979, p. 28-48. James Baikie, Lands and Peoples of the Bible, London, 1932, p. 92. Samuel Kramer, Cradle of Civilization, New York, 1967, p. 36-40, etc.*
17. Գ. Բ. Ջահուկեան, *Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 338-341, 225:*
18. Ծիոթութիւնների տեղիք չտալու նպատակով թուագրութիւնները տուել ենք՝ ըստ E. J. Bickerman, *Chronology of the Ancient World, London, 1969՝ աշխատութեան ռուսերէն թարգմանութեան:*

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Յուսիկ Սեւրունեան

Յովհաննէս Կարապետի վանքը միջնադարեան Հայաստանի Այրարատ նահանգի Ուրծ եւ Արծ¹ գաւառների (աւելի ուշ՝ Վեղի) XIV-XVII դդ. նշանաւոր հոգեւոր եւ կրթամշակութային կենտրոնն էր: Գտնուում է ներկայիս Արարատի մարզի Լանջառ գիւղից մօտ 7 կմ արեւմուտք:

Վանական Համակառոյցը եւ նրան շրջապատող միաբանութեան շէնքերի աւերակները տարածուում են ներկայիս Զնջրու լքուած գիւղատեղիից շուրջ 1 կմ հիւսիս-արեւմուտք գտնուող մի հարթակի վրայ: Հիւսիսային կողմում ժայռեղէն լանջն է, իսկ հարաւում՝ մի նեղ ձորակ, ուր գտնուում է վանքի աղբիւրը²: Միջնադարեան մատենագրական աղբիւրները վանքի մասին գրեթէ ոչինչ չեն հաղորդում, սակայն Համալիրի ճարտարապետական կառոյցների որմերին փորարդուած մի քանի տասնեակ վիմական արձանագրութիւնների վերլուծութիւնը հիմք է տալիս ինչ-որ չափով վեր հանել միաբանութեան պատմութեան հետ կապուած տարբեր հանգամանքներ:

Մասնագիտական գրականութեան մէջ Ս. Կարապետի վանքի ամենավաղ յիշատակութիւնը Վենետիկի Միթիթարեան միաբանութեան անդամ, նշանաւոր հայագէտ Հ. Ղեոնդ Ալիշանինն է, որն իր «Այրարատ» աշխատութեան մէջ բերում է տարածաշրջանի բոլոր գիւղերի եւ յուշարձանների նկարագրութիւնը, ի թիւս որոնց «... կայ մեծագոյն գիւղ Զինծիւրի, առ որով նշանակին եւ աւերակք քարաշէն տանց եւ եկեղեցւոյ եւ մենաստանի յանուն Յովհաննու Մկրտչի»³:

Մի այլ տեղ մեծ գիտնականը բերում է «Վիճակագիր Վէտի-Պասարի (Ուրծ եւ Արած) յամի 1873»: Այստեղ յիշատակում են Ուրցաձորն⁴ ու շրջակայ յուշարձանները, ի թիւս որոնց նաեւ Զնջրու, որն ունէր 91 տուն՝ 707 բնակչութեամբ⁵:

Յովհաննէս Կարապետի վանքն առաջին անգամ մանրամասն ուսումնասիրել եւ նիւթերը հրատարակել է մեծ հայագէտ Գարեգին Յովսէփեանը⁶: Վերջի-յապէս Գարեգին Յովսէփեանը է Սիւնիս աշխատութիւնը նուիրուած է Սիւնեաց նշանաւոր տէր Տարսայիճ Օրբելեանին (1272-1290 թթ.) եւ նրա սերնդին: Քանի որ Յովհաննէս Կարապետի վանքը գտնուում էր Տարսայիճ իշխանի որդի Զագունուում էր Տարսայիճ իշխանի որդի Զաւրի եւ նրա սերունդների տիրոջթիւներում, լալի եւ նրա սերունդների տիրոջթիւներում, Սիւնիս աշխատութիւնը շարադրելիս անուանի Հայագէտի Համար իբրեւ աղբիւրագիտական հիմք են ծառայել վանական Համալիրի ճարտարապետական յուշարձանների որմերին փորագրուած վիմական արձանագրութիւնները:

Աւելի ուշ Յովհաննէս Կարապետի վանքն ուսումնասիրել եւ նրա վիմագրերը հրատարակել է Հնագէտ-պատմաբան Յովսէփ Եղիազարեանը: Վերջինս նկարագրել է վանական Համալիրի յուշարձանները եւ յօդուածում գետեղել 17 արձանագրութիւններ, որոնց մի մասը վանքից նագրութիւններ, որոնց մի մասը վանքից են, իսկ միւսները՝ Զնջրու գիւղի հիւսիսային գերեզմանատան խաչքարերի եւ տապանաքարերի վրայից⁷:

Ս. Կարապետի վանքը բաղկացած է երեք մոնումենտալ շինութիւններից եւ միաբանութեան բազմաթիւ կառոյցներից:

Բարաւորից մի փոքր վերեւ զետեղուած է մի այլ քանդակախումբ, որը պատկերում է «Պանտոկրատորը չորեքկերպեան գահի վրայ» տեսարանը:

Կոմպոզիցիայի կենտրոնում լուսապսակով Յիսուսի քանդակն է, երկու կողմերում՝ չորս աւետարանիչների խորհրդանիշերը (մարդ, առիւծ, եզ, արծիւ)¹⁹: Սրանցից աջ ու ձախ քանդակուած են երկու մարդկային գլուխներ, որոնք պատկերում են Պողոս եւ Պետրոս առաքեալներին²⁰:

Ինչպէս տեսանք վերեւում, եկեղեցու մուտքի բարաւորի արձանագրութիւնը հաղորդում է յիշեալ երկու քանդակախմբերի կերտողի անունը, որը, Ս. Բարխուղարեանի համոզմամբ, տապանատան արեւելեան որմին ներքուստ փորագրուած 1346 թ. արձանագրութեան մէջ վկայուած Սարգիս Վարդապետն է: Վերջինս Կիրակոս Գետկեցուց յետոյ միաբանութեան առաջնորդն է եւ էլիկում իշխանի նուիրատուութիւնների դիմաց պատարագ սահմանողը: Ս. Բարխուղարեանը, ելնելով այն հանգամանքից, որ Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցին կառուցուած էր 1301 թ., միեւնոյն ժամանակով է թուագրուում նաեւ Սարգիս Վարդապետի կերտած քանդակները: Իրողութիւնն այն է, որ այս քանդակները կերտուած են կառոյցի շինարարութեան աւարտից շատ աւելի ուշ: Բանն այն է, որ արեւմտեան որմի եւ բարաւորի շարուածքի ժամանակ կառուցողները այդ հատուածները չեն նախատեսել քանդակների համար: Դա պարզորոշ երեւում է պատի մէջ զետեղուած քարերի շարուածքից: Դրանք հպման լայն մակերես չունեն: Շաղախը բռնելու համար ունեն ներքուստ նեղացող մշակում: Շարքի մէջ քարերն իրար միացած են մօտ 1,5 սմ հպման մակերեսով: Հետագայում քանդակների կերտ-

ման ժամանակ սալերի շփման մասի բարակութեան պատճառով դրանց ծաւալների հեռացումից յետոյ քարերի միջեւ ճեղքեր են դոյացել, եւ 1-2 սմ լայնութեամբ բացուել է կրաշաղախը:

Եթէ հաշուի առնենք այն պարագան, որ տէր Սարգիսն իբրեւ վանքի վանահայր է յիշատակուում 1346 թ., ապա պէտք է ենթադրել, որ եկեղեցու յիշեալ քանդակները կերտուել են առնուազն XIV դ. 20-30-ական, մինչեւ անգամ՝ 40-ական թթ.:


Վանահայր Սարգիսը ոչ միայն շնորհաշատ քանդակագործ էր, այլեւ ուսեալ անձնաւորութիւն: Այսպէս, Զալալ մեծ իշխանի որդիներից Ստեփանոս-Տարսայիճը, որը հետագայում Սիւնիքի հոգեւոր թեմի առաջնորդն էր, իր նախնական կրթութիւնը ստացել է Սարգիս Վարդապետի մօտ, ապա ուսումնառութիւնը շարունակել նշանաւոր Գլաճորի համալսարանում՝ աշակերտելով մեծանուն բաբունապետ Եսայի Նչեցուն²¹:

Գլաճորի համալսարանում Պողոս Կիլիկեցու 1314 թ. ընդօրինակած Աւետարանի յիշատակարանում կարդում ենք. «...Եւս առաւել աղաչեմ յիշել աղաւթիք զսուրբ եւ զերանաշնորհ բաբունին զՍարգիս, զղաստիարակ եւ զսնուցիչ տեառն Ստեփաննոսի, որ ի մանգութենէ մինչ ի յարբուեսս հասակի, մեծաւ ջանիւ եւ աշխատութեամբ, վաստակեալ ի սնունդ տիրապէս, եւ յուսումն, եւ ի հրահանգս հոգեւոր եւ մարմնաւոր...»²²:

Վանքի Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցու որմերին ներքուստ փորագրուած են եւս մի քանի արձանագրութիւններ, որոնց մէջ առանձնանում է կառոյցի հարաւային պատի ելուստի արեւմտեան մասում զետեղուած հինգ տողից կազմուած յիշատակագիրը.

Ի ՏԱԻՆ[Ի] ՄԲ ԳՐԻԳՈՐԻ / :Ա: ՊԱ-

ՏԱՐԱԳ ԲՈՒՏ / ՎԱՐԴՊԵՏԻՆ ԺՐԱՋԱՆ / ԱՇԽԱՏՈՂԻՆ ԿԱՏԱՐԻԶՔՆ Ա[ՎՐ]Հ[Ն]ԻՆ ԱՅ:



ԾՏԱՆԸԹԳՐԻԻ ՌԻ
:Ա:ՊԱՏԱՎԳԲԻՏ
ՎԱՊԵՏԵԹՐԱԶԱ
ՆԱՇԽԱՏՈՂԻՆ
ԿԱՏԱՐԻԶՔՆԱՅԵԱ

Արձանագրութիւնը հաղորդում է վանքի ճարտարապետ Բուտի անունը, որը կառուցել է Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցին եւ կից շինութիւնները²³:

Բուտի մասին մեծ դրուատանքով է արտայայտուել վիմագրագէտ Ս. Բարխուղարեանը՝ նրան համարելով Զալալեան տան ճարտարապետը: Խօսելով Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցու կառուցման մասին՝ նա գրում է. «Նկատի ունենալով այն, որ նրա (Բուտի) համար յատուկ արձանագրութիւն է մար գրուել, պատարագ յատկացուել, եւ կոչուել է «ժրաջան աշխատող»՝ պիտի ենթադրել, որ նա երկար աշխատել է իշխանական այս տոհմի համար եւ արդէն խանական ու հեղինակութիւն վայելող վարպետ է»²⁴:

Բուտ ճարտարապետի անունը կցագրով փորագրուած է նաեւ եկեղեցու դմբեթի վրայ արտաքուստ՝ թմբուկի արեւելեան պատուհանի պսակի քարի վրայ: Յիշեալ պատուհանի քարի վերին կամարակապ մասում, շրջանաձեւ խորդեր մակերեսի մէջ, հաւասարաթեւ խաչի քանդակ է, իսկ դրանից ներքեւ, պատուհանի բացուածքի վերին երկու կողմերում, փորագրուած է.

ԿՍ ԲՏ (Կիրակոս, Բուտ)


Կիրակոսն անշուշտ վանքի առաջին վանահայրն է, որի անունը մէկ անգամ եւս խոշոր տառերով փորագրուած է դմբեթի ներսում, թմբուկի վրայ, արեւելեան եւ հիւսիսային պատուհանների միջեւ.

ԿԻՐԱԿՈ[Ս]:

ՉԿԻՐԱԿՈ


Սպիտակաւոր Աստուածածին եկեղեցու թմբուկի չորս պատուհանների արձանագրութիւնների վերձանութիւնից պարզ է դառնում, որ այստեղ փորագրուած են այն անձանց անունները, որոնք անմիջական կապ են ունեցել վանքի հիմնադրման հետ: Յիշատակուած են XIII դ. վերջի եւ XIV դ. սկզբի աշխարհիկ եւ հոգեւոր գործիչների անունները:

Հարաւային պատուհանի պսակի քարի վրայ փորագրուած է.
ՏՐ ԶԱԼ ԳՅ (ՏԵՐ ԶԱԼԱԼ, ԳՈՆՑԱ):



Կցազրում յիշատակուած են վանքի շինարարութեան հովանաւորներ Զալալ Օրբելեանն ու իր կինը՝ Գոնցա իշխանուհին²⁵:


Թմբուկի հիւսիսային պատուհանի պսակի քարի վրայ փորագրուած է:
ՏԻ ՅԾ (ՏԻՐԱՅՈՒ ՅԻԾԵՑԷՔ):



Այստեղ յիշատակուած է եկեղեցու ներքուստ հարաւային որմին եւ աւագ խորանի հիւսիսային կողին փորագրուած Գոնցա իշխանուհու եւ վանահայր Կիրակոս վարդապետ Գետկեցու արձանագրութիւնները փորագրող գրիչը:

Եւ վերջապէս թմբուկի արեւմտեան պատուհանի պսակին փորագրուած է կցագիր, որը չեն վերծանել նախորդ ուսումնասիրողներինց եւ ոչ մէկը: Այստեղ միւսների նման վայելչագիր տառերով փորագրուած է:


ՔՐ ՓՐ ՅԾ (Քրիստափոր իշեցէք)



Վանքի հիմնադրման հետ կապուած արձանագրութիւններում Քրիստափոր անունը չի հանդիպում, եւ մեզ յայտնի չէ նրա ով լինելը: 1996 թ. հետախուզական աշխատանքների միջոցին գաւթում յայտ-

նաբերուել է մի խաչքար, որի ստորին մասում փորագրուած է:


ԱԾ ՅԻԾԷ ԶՔ [ՐԻ] Ս [ՏԱՓՈ] Ր:



Նոյնացնել այս երկու Քրիստափորներին հաստատապէս չենք կարող, մանաւանդ որ խաչքարը թուական չունի: Կարող ենք պնդել միայն, որ արեւմտեան պատուհանի պսակին յիշատակուած Քրիստափորը վանական համակառոյցի հիմնադիրների համախոհն ու ժամանակակիցն է:


Եկեղեցու ներսում, Բուտ ճարտարապետի արձանագրութեան մօտ, նոյն ելուստի հիւսիսային մասում, փորագրուած է երկու տող:

ԵՍ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՍ ԾԱՌԱՅ ԵՆԱԻՔՍ / ԱՅՍՐ ԴԱՍԻ ԳՐԵՑԻ. ԹՎ. :Ռ : Խ : Բ: (1593 թ.):



Եկեղեցու ներսում, հիւսիսային աւանդատան մուտքի վերին մասում, փորագրուած է ութ տող:

ԱԾ ԳԹԱ / Յ[Ա.]ՍԼԱՆԱ / Ի ՏԱԻՆ [ԻՆ] ՄԲ ԱՏԵՓԱՆՆՈՍԻ / :Գ: ՊԱՏԱՐԱԳ ՎԱՐԴԱՆԱ / ԿԱՏԱՐԻԶՔՆ Ա[ՎՐ]Հ[Ն]ԻՆ Ի Տ[ԵԱՌ]ՆԷ / ՅԱՅՍՄ ԽՈՐԱՆԻ Պ[Ա.] ՏԱ[ՐԱ.] Գ ՅՈՐՈ ԱՆՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱ/Ց ԱՌՆԵՆ ՀԱՆԱՊԱԶ:



Այս արձանագրութիւնը Հ. Եղիազարեանը բաժանել է երկու մասի եւ հրատարակել՝ որպէս առանձին տեքստեր²⁶:

Յաջորդ արձանագրութիւնը փորագրուած է եկեղեցու հիւսիսային որմին ներքուստ՝ նրա ելուստի արեւմտեան կողին: Եօթ տողից է:

Ի ՏԱԻՆԻ ՀՌՈՒՓՍԻՄԵՆՑ / :Ա: ՊԱՏԱՐԱԳ ՄՆՈՆԱՅ ԳԱՅԻԱՆԵՆՑ :Ա: Պ[Ա.] Տ[ԱՐԱԳ] ԽԱԹՈՒՆԱ Ի ՏԱԻՆ :Խ: ԻՑՆ :Ա: ԳՐԳԱՐԻՆ :Բ: - ԲԱԶԳԻՆ .Ա. ՍԻՐՈՒՆ /ԿԱՆՆ ՈՐ ԵՏՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ / ՏՈՒՆԵ ԱՅԳԻ ՅՈՒ ԱԾ:



Սպիտակաւոր Աստուածաձին եկեղեցու հարաւային որմին, արտաքուստ տարբեր հատուածներում, խաչաքանդակներ են գծագրուած, որոնցից մի քանիսի տակ փորագրուած են արձանագրութիւններ: Սրանցից մէկը երկու տողից է:


ԱԾ ՈՂՈՐՄԻ ՅՈՎԱՆԻՍԻ ՈՐ ՍՐՈՎ ՄԵՌԱԻ Ի ԹՎԻՍ :Ձ:Ժ:Բ: (1463 թ.):

ԱԾ ՈՂՈՐՄԻ ՅՈՎԱՆԻՍԻ ՈՐ ՍՐՈՎ ՄԵՌԱԻ Ի ԹՎԻՍ :Ձ:Ժ:Բ:

Նախորդի կողքին մէկ տող՝ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱԾԱՏՈՒՐԻՆ:

ԱԾ ՈՂՄ ԱԾ ԱՌՈՒՐԻՆ

Եկեղեցու աւագ խորանի բեմառէջքի հիւսիսային մասում, աստիճանների մօտ, վայելչագիր փորագրուած է երկու տող:
Շ/ՏՐ ԱԾ (Տէր Աստուած)



Աւագ խորանի հիւսիսային մասում փորագրուած կիրակոս վարդապետ Գետկեցու վիմագրի մօտ պահպանուել է թերի եւ եղծուած մի այլ արձանագրութեան մաս:

[Յ] ՈՂԱՆՍ Թ ՌՂԳ (1644 թ.)

... ՈՂԱՆՍ Թ ՌՂԳ.

Չորս տողով արձանագրութիւն է փորագրուած եկեղեցու ներքուստ հարաւային ելուստին, որի սկսուածքն է միայն վերծանուում:

ԵՍ ԿՈՒՍՏԱՆԴ ԳՐԵՑԻ ԱՅՍ ԹՎԻՍ / Ի ԹՎ ՌԺՀԴ (1725 թ.)

ԵՍ ԿՈՒՍՆ Ը Դ ԳՐԵՑԻ ԱՅՍ ԹՎԻՍ
Ի ԹՎ Ծ Ը Դ
ՈՐ ԹՎ Բ Զ Ի Կ
Գ Ե Կ Ա Ե Ր Կ Ի Ն Ա + Ա +

Եկեղեցու արեւելեան որմին արտա-
քուստ ելնդաւոր տառերով երկու տող՝
ՔՍԻ Ծ[Ա.] Ռ[Ա.] ՏՐ ՈՎ/ՍԷՓ ԹՎ
ՌՃԺԷ (1668 թ.)

ՔՍԻ ԾՆՔ ԿՍԻ Ռ Վ
Ս Է Վ Բ Ո Ւ Յ Ը Ե

Եկեղեցու ներսում, աւագ խորանի
հիւսիսային որմնամոյթի հարաւային կո-
ղին, երեք տող՝

ԵՍ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԷՏԻՍ/ԾԱՌԱՅ
ԵՄ/ ԳԻՐԻՅ ԱՎՈՐԱ ԹՎ ՌԽԲ (1593 թ.)

Էս սբ կարապետիս
ժառանգ
Կ հրիյ ահոյս լ շ Ե Բ

Նախորդ արձանագրութիւնից մի
փոքր ներքեւ երեք տող՝
ՆԻԿՈՂԱՅՈՍ/ ԹՎ ՌՄՂԹ / 1851

ՆԻԿՈՂԱՅՈՍ
ԹՎ ՌՄՂԹ
1851

Եկեղեցու հիւսիսային որմին արտա-
քուստ երկու տող՝

ԱԾ Ծ[Ա.]Ռ[Ա.] ԱԼ[Ե]ՔՍԱՆԴՐ/ Ա-
ՎԱՔՈՎ Ի ՂԱՄԱՐԼՈՒ

ԱՅ ԾՐ ԿԼԲՍԱԵՐ
ԱՎ ԱԲ ՂՎԿՂԱՄԱՐԵՈՎ

Արձանագրութիւնների զգալի մասը
փորագրուած է տապանատան եւ զանգա-
կատան որմերին: Մեծ մասը վերաբերում
է XVII-XIX դդ.:

Զանգակատան արձանագրութիւննե-
րը զետեղուած են երկրորդ յարկում՝ մա-
տուռ-աղօթարանի որմերին ներքուստ:
Ամենավաղ արձանագրութիւնը փորա-
գրուած է մատուռի հիւսիսային որմի վե-
րին մասում: Վեց տողից է: Վիմագիրն
այսօր ամբողջովին քայքայուած է: Ըն-
թերցում է միայն մի քանի բառ: Առա-
ջին տողի սկզբում վերձանում է.

ՇՆՈՐՀԻՎՆ ԱՅ ԵՍ....
Վերձանում են նաեւ վերջին երկու տո-
ղերից որոշ հատուածներ.
ԱԾ ԱԾՆԻՍԱԻՀՐՆ Ի ՏԷ...
ԵԱՇՆ Է ԵՎ.....

-----ՀՆՈՐՅԻԲ ԱՅԵՍ-----ՄՂԾ-----
-----ՈՂԱՐ-----
-----ԵԻԲ-----
-----Յ-----ՂՈՒ-----
-----ԱՅՆԵՍԱՔՈՎ-----
-----ԱՅԱՅԵԻՏԷԵԱՂԻԵ-----

Յաջորդ արձանագրութիւնը փորա-
գրուած է մատուռի հարաւարեւմտեան
մոյթի հարաւային կողին հինգ տողից՝
ԹՎ ՌԽԴ (1595 թ.) / ԵՍ ՀԱՂՎԵԱԹ
/ ՍԱՐԳԱԻԵԱՔ / Ի

ԱԲ ԿԱՐԱՊԵՏՈՅ / ՅԻՇԵՑԷՔ Ի
ՔՍ:

ԹՎ Ռ Խ Դ
ԷՍ ՀԱՂԷԱԹ
ՍԱՐԳԱԼԷԱՔ
ԻՍԲ ԿԱՐԱՊԵՏՈՅ
ՎԻՇԵՑԷՔ Ի ՔՍ

Նախորդ արձանագրութիւնից ներ-
քեւ փորագրուած է յաջորդ վիմագիրը, ո-
րը բաւական վատ է պահպանուել: Այն
եօթ տողից է: Վերձանում է միայն վեր-
ջին հատուածը.

...ԿԱՄ ԿԵՆ/ԱԼ ԲԱՐԻ ԿԵՆԱՅ/
ՎԱՆԿՆ: ՌՃԾԹ (1710 թ.)

ՅՆԱ
ԿԵՆԿԱՍԻ Ա
ԻՆԸ Կ Վ Մ Ի Վ Ս
Լ Ս Ք Մ Կ Վ Ս խ Ղ
Բ Է Ն Կ Վ Մ Կ Է Ն
Ա Լ Բ Ա Ր Ի Կ Է Ն Վ Ղ
Վ Ա Ն Կ Ն Ճ Ծ Թ

Մատուռի հարաւարեւելեան որմնա-
մոյթի արեւմտեան կողին չորս տող՝
ՏՐ ԵՍ ԿԱՐԱՊԵՏՍ ԵՎԱՅ Ի ՄԲ/
ՈՒԽՏՍ Թ[Վ] ՌՀ (1621 թ.)

ԵՍՄՐԿԱՐԱՊ
ԵՏՍԵԿԱՅԻ ՍԲ
ՈԽՄՍ
Թ Ո Յ

Նախորդների կողքին փոքր գրերով
եօթ տող՝

ԱԾ ՈՂՈՐՄԻ/ԿԻՐԱԿՈՍ/ԻՐԻՑԻՆ
/ ԿԷՆ / ԿԷՆԱՅ / ՌՃԾԹ (1715 թ.)

ԱՅ ՈՂՈՐՄԻ
ԿԻՐԱԿՈՍ
ԻՐԻՑԻՆ
ԿԷՆ
ԿԷՆԱՅ
:Ճ:Ժ:Դ:
:Ղ:

Մատուռի մուտքի ձախ մասում եր-
կու տող՝
ՆԱԻԱՍԱՐԴ / ԳԻՐԵՑԻ:

ՆԱԼԱՍԱՐԴ
Գ Ի Ր Ե Ց Ի

Երկու փոքրիկ արձանագրութիւններ
զանգակատան ներսում՝
ԱՂՀԱՆՔ ՏԻՐ

ԱՂՀԱՆՔ ՏԻՐ

Մատուռի հարաւարեւելեան որմ-
նամոյթի հիւսիսային կողին երեք տող՝
ԹՎ ՌԼԹ (1590 թ.) / ՍԱՀԱԿ ՀԱՐԵ-
ՂԱՅ ԳԻ[Ր]ԵՑ:

ԹՎ ՌԼԹ
ՍԱՀԱԿ ՀԱՐԵ
ԵՂ ԱՅ ԳԻՆԿ

Մատուռի հարաւային որմին ներ-
քուստ իրար կողքի փորագրուած են եր-
կու արձանագրութիւններ, որոնցից առա-
ջինը երեք տողից է.
ԵՍ ԳՐԻԳՈՐԻՈՍ/ ՈՐԴԻ ՈՎԱՆԷ-
ՍԻ ԳՐ/ԷՑՑԻ ԹՎ ՌՃԿԳ (1714 թ.)

ԵՍ ԳՐԻԳՈՐԻՈՍ
ՈՐԴԻ ՈՎԱՆԷՍԻ ԳՐ
ԵՅԿ Ի ԹՎ ՌՃԿԳ

Երրորդ տողի սկզբում մի Ց-ն աւե-
ւորդ է: Նախորդի կողքին երկու տող՝
ԵՍ ՅՈՒՍԷՓ ԳՐ [ԵՑԻ] / ԹՎ ՌՃԺԷ
(1668 թ.)

ԵՍՅՈՎ ԵՒԳՐ
Ի ՎՆՃՃԵ

Զանգակատան հիւսիսային որմին
արտաքուստ ինը տող՝

ԵՍ ՎԱՐԴ ԱՆ/ ԳՐ/ԷՑԻ ԱԾ Ո-
ՂՈՐ/ՄԷԱ: ՍՈՒՐԲ: ԵՍ ԿՐԱՅ/ԱԿՈՍ:

Է Ս ՎԱՐԴ
ՄՆ

ԳՐ
Է ԿԻ

Վ Յ ՈՂՈՐ
ՄԷԱ

Ս ՈՒՐԲ

Ե Ս ՎՐԱՅ

ԱԿՈՍ

Զանգակատան հիւսիսային որմին
արտաքուստ կցազրերով փորագրուած է
մէկ տող թերի եւ անաւարտ հետեւեալ
արձանագրութիւնը:

ԿԱՄԱՎՆ ԱԿՈՐԱ ՄԵՆՔ

ՎԷ ՎՐԷԷ ԷԷ

Նախորդ արձանագրութիւնից ներ-
քեւ երեք տող՝

ԱՎԷՏԻՍ ՆԱԶԱՐ/ՈՎ ԱՂՄԱՐԼԵ-
ՑԻ 1894 Ի ԱՄԻ

ԱՎԷՎ ԻՍՆԱ ՎՐ
ՈՎ ՄԱՄ ԱՐԼԵԿԻ
1894 ԻԷ

Նախորդ արձանագրութեան աջ մա-
սոււմ մէկ տող՝

ԵՍ Յ[ՈՎԱ]ՆԷՍ Տ[Ե]Ր Յ[Ա]Ր[ՈՒ-
ԹՈՒՆ]Ե[Ա.]Ն:

ԵՍ ԿՐԱՅ ԱԿՈՍ
ՄՆ ԳՐ Է ԿԻ

Նախորդի մօտ փորագրուած է երկու
տողից, բաւական վատ պահպանուած մի
արձանագրութիւն:

ԵՍ ԲԱՏԱԻ.....

ԵՍ ԲԱՏԱԻ
ՊՈՂԿ ԴԼԶԱ

Նախորդից ներքեւ չորս տող՝

1865 ԱՄԻ: / ԱՅ ԾԱՌՍՅԻՆ ՏՐ Ա-
ԶԱՏԵՍՑԷ Ի ՄԵՂԱՑՆ ԻՄՈՑ / ԵԻ Ի
ՓՈՐՁԱՆԱՑՆ ԵԻ Ի ՆԵՌԱՑՆ / ՍԱՏԱ-
ՆԱԻ/.... ԳԱՍ/ՊԱՐՈՎ:

1865 Կ-
ԱՅ ԾԱՌՍՅԻՆ ՄՐ Ա ՉԱՏԵՍՑԷ Ի ՄԵՂԱՑՆ ԻՄՈՑ
ԵՒ ԳԱՍ ԵՒ Ի ՓՈՐՁ Ա Ն ԱՑՆ ԵՒ Ի ՆԵՌԱՑՆ
ՊԱՐՈՎ Ս ԱՏԱՆԱԻ

Յաջորդ արձանագրութիւնը փորա-
գրուած է գերեզմանատան հարաւարեւմ-
տեան անկիւնում երեք տողից՝

ԱԾ ՈՂՈՐ[ՄԻ] ԿԱՐԱՊԵՏ/ ԹՎ Ռ
(1551 թ.)

ԱԾ ՈՂՈՐ
ԿԱՐԱՊԵՏ
ԹՎ

Գերեզմանատան արեւելեան որմի
կենտրոնական մասում արտաքուստ երեք
տող՝

ԱԾ / ՈՂՈՐՄԷԱՅ/ ՂԱՍՈՒՐՄԻՆ:

ԱԾ
ՈՂՈՐՄԷԱՅ
ՂԱՍՈՒՐՄԻՆ

Նախորդի մօտ, երեք տող:

է
Կ Ղ Ի Մ
ԵՍ ԿՐԱՅ ԱԿՈՍ
ՄՆ ԳՐ Է ԿԻ

.....ԵՍ ՄԿՐՏԻՉ ԱԽՏԵՑԻ ԵԿԱՄ
ԵԻ.....

Արձանագրութիւնը թերի է, շարու-
նակութիւնը չի փորագրուել:

Եկեղեցու արեւելեան որմին արտա-
քուստ երկու տող՝

ՎՐԷԺ ԽՈՒՄԲ / 1905:

ՎՐԷԺ ԽՈՒՄԲ
1905

Վանական կառոյցների որմերին
պահպանուել են զգալի թուով առանձին
փորագրուած տառեր, երբեմն անուններ,
որոնք կարող են պատկանել քարերը փո-
րագրող վարպետներին: Դրանք կարգա-
ցուած են՝

Լ Լ
Ս Ս Ս
Մ Մ Մ
ԱԽ ԱԻ
ՎԱՐ [ԴԱՆ] ՎԷ
Հ Հ
ԱՎԱՆ ՀԱ

ՍԱՐԳԻՍ ԿԱՄ ՄԱՐԳԱՐ ԱՅ

Վանքի պարսպապատերի ներսում
պահպանուել են բազմաթիւ տապանաքա-
րեր, որոնց մի մասն ունեն յիշատակա-
գրեր: Սրանց զգալի մասը եղծուած է եւ
չի վերծանուում:

Սպիտակաւոր Աստուածածին եկեղե-
ցու արեւելեան մասի տապանաքարերից
մէկի վրայ մէկ տողով փորագրուած է:
ԱՐԱՔՍԻՈՍ ՀԱՂԱՐԾՆԵՑԻ

ԱՐԱՔՍԻՈՍ ՀԱՂԱՐԾՆԵՑԻ

Արձանագրութիւնում յիշատակուած
Արաքսիոսի ով լինելը թէեւ յայտնի է,
սակայն պարզ է դառնում, որ այս անձը
կապուած է եղել հիւսիսային Հայաստա-
նի նշանաւոր Հաղարծնի վանքի հետ:


Նախորդի կողքին, մի այլ տապանա-
քարի վրայ, փորագրուած է մէկ տողից
կազմուած հետեւեալ յիշատակագիրը:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎԱՆԻՍԻ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎԱՆԻՍԻ

Եկեղեցու հարաւային որմի մօտ,
նրանից 1 մ հեռաւորութեամբ, պեղուել է
մի տապանաքար, որի մակերեսին մար-
դու զծապատկեր է: Վրան չորս տողից
յիշատակագիրն է, որն ամբողջութեամբ
չի վերծանուում:

ԹՎ ԶԸ (1459 թ.) ՔՄ ԱԾ ՈՂ [ՈՐ]
ՄԻ ԽՈՆԴՔԱՐԻՆ, ՈՐ ՏՂԱՅ ԱԻՐԱԻՔ
/ ՓՈՒՏԵՑԱԻ Ի ՔՍ ԵԻ ԵԹՈՂ ԵՄՉ ԿՈՑ /
ՄԵԾ



Բայրատարեանը⁴², որի հետագայ գործու- նէութեան մասին ոչինչ յայտնի է: Աւե- լի ուշ, 1910-1911 թթ., մի վաւերագրի համաձայն՝ Ջնջրլուի Յովհաննու Կարա- պետի վանքը յիշատակուած է Երեւանի գաւառի գլխաւոր սրբավայրերի ցուցա- կում⁴³:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ուրծ եւ Արծ (վկայուած է նաեւ Արած ձեռով) գաւառների տարածքն ընկած էր Կոտէից գաւառից հարաւ: Վաղ եւ զարգացած միջնադարում այն մտնում էր հայոց արքունի Ոստան գաւառի մէջ: Իր ամենաշահաւոր բնակավայրերն էին Արտաշատ ու Դուին մայրաքաղաքները, Խոր վիրապ, Հաւուց թառ, Աղջոց Ս. Ստեփանոս, Վանստան վանքերը, Քեղուայ կամ Գեղիի բերդը եւ այլն: Յովհաննու Կարապետի վանքի հիմնադրման շրջանում Ոստանի հիւսիսային հատուածն յայտնի էր Ուրծ կամ Արծ անունով: Այն համընկնում էր Ազատ գետի վերին եւ միջին հոսանքներին:
- 2 Ներկայումս պահպանուել են բազալտե երկու գուռերը. ժամանակի ընթացքում աղբիւրը ցամաքել է: Այն այսօր բխում է փոքր-ինչ ներքէ: Եւս մի քարէ գուռ է ընկած յիշեալ երկուսից մօտ 500 մ ներքէ:
- 3 Հ. Ղ. Ալիշան, Այրարատ՝ բնաշխարհ Հայաստանէայց, Վեներտիկ, 1890, էջ 445:
- 4 Ուրցաձորը յիշատակում է նաեւ XVIII դ. Սիմեոն Երեւանցի, որը, բերելով Խոր վիրապ վանքի վիճակի նկարագրութիւնը, բնակավայրերի ցանկում չի նշում ո՛չ Ջնջրլուն, ո՛չ էլ Ս. Կարապետի վանքը: Տե՛ս Սիմեոն Երեւանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 280:
- 5 Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 551:
- 6 Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, «Հասկ», Անթիլիաս, 1946:
- 7 Յ. Եղիազարեան, Յովհաննու Կարապետի վանքը եւ նրա վիմագիր արձանագրութիւնները, «Էջմիածին», Ա., 1962, էջ 57-63:
- 8 Այս եւ Յովհաննու Կարապետի վանքի մի քանի արձանագրութիւններ, ինչպէս նշուեց վերեւում, հրատարակել են Գարեգին Յովսէփեանը եւ Յովսէփ Եղիազարեանը: Սակայն որոշ արձանագրութիւնների ինչ-ինչ հատուածներում մենք ունենք տարբերութիւններ: Վերջին տարիների ուսումնասիրութիւնների ժամանակ վանքում հասաքել ենք նոր վիմագրեր, որոնք, փաստօրէն, գիտական շրջանառութեան մէջ են դրում առաջին անգամ:
- 9 Գ. Յովսէփեան, Աշ. աշխ., էջ 16-18. Յ. Եղիազարեան, Աշ. աշխ., էջ 61-62:
- 10 Սիմեոն մեծ իշխան Տարսայիճի մահից յետոյ

Ջալալն իր եղբայր Էլիկումի հետ ժառանգել էր հօր տիրոջները (տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 4, Երեւան, 1948, էջ 287-288): Նրա մասին մեծ դրուստանքով է արտայայտուած 1331 թ. ընդօրինակուած Աւետարանի հեղինակը: Վերջինս, ակնածանքով արտայայտուելով Սիմեոն մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճի հասցէին, յիշատակում է նրա հօրը. «... որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազէն մեծամարտիկ զինուորի Ջալալին» (տե՛ս Ժ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 231): Ջալալ իշխանի տիրոջներում էր գտնուած Վայոց ձորի Չուայ (ներկայիս՝ Չիւայ) գիւղը, որը Սիմեոն մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելեանը (Ջալալի եղբայրը) քսանմէկ հազար արծաթի դրամով գնեց եղբորից եւ ամրացրեց Ամաղուի Նորավանքին (տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. 3, կազմեց Ս. Բարխուդարեան, Երեւան, 1967, էջ 216): Ջալալ մեծ իշխանը ունէր չորս որդի՝ Տարսայիճ, Ծահնշահ, Էլիկում եւ Աղբուղա: Որդիներից Ստեփանոս-Տարսայիճը Գլաձորի համալսարանի սաներից էր՝ Եսայի Նչեցու աշակերտը: Իր հօրեղբոր որդու՝ Յովհաննու Օրբելի մետրոպոլիտութեան ժամանակ նրանից ստացաւ եպիսկոպոսութեան աստիճան, իսկ մահից յետոյ յաջորդեց նրան՝ նստելով Սիմեոն հոգեւոր առաջնորդի աթոռին. «... տէր եւ վերատեսուչ զամերեց եւ զյովս արհիերեց աթոռոյս Սիմեոն Տարսայի եւ Նորավանքի եւ Յայացքարոյ, տէր երկոտասան գաւառաց...» (տե՛ս Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 231): Ստեփանոս-Տարսայիճը մահացել է 1331/32 թթ., քանի որ 1333 թ. Սիմեոն մետրոպոլիտ է յիշատակուած Վերին Նորավանքի վանահայր տէր Սարգիսը (տե՛ս Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 257): Ջալալի միւս որդիների մասին եղած տուեալները խիստ սակաւախօս են: Ստեփանոս-Տարսայիճի պատուէրով Գլաձորում Պօղոս վարդապետ Կիլիկեցու ընդօրինակած 1314 թ. Աւետարանի յիշատակարանում Ամիր Բուրթելի (Մեծ) եւ Բուղտայի կողքին, որպէս երկրամասի տէրեր, «որք են իշխանք եւ տէր նահանգիս Սիսական», յիշատակուած են նրանց հարազատներ Ծահնշահը, Էլիկումը եւ Աղբուղան (տե՛ս Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 100): 1331 թ. Թորոս փիլիսոփայի Աւետարանի յիշատակարանում Ստեփանոս-Տարսայիճը եղբորն յիշում է արդէն մահացած. «Սրտի մտաք յիշել զգեղագեղ եւ զարեգագամափայլ եղբայրն իմ՝ զպարոն Ծահնշահ, առաջի գեմման Բրիստոսի» (տե՛ս Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 231): Յիշատակարանի «եղեւ մեզ այս բարօտրամագին ի տանի գատկին, ի ԶՁ թ» արտայայտութիւնը փաստում է այն մասին, որ Ծահնշահի մահը տեղի է ունեցել նոյն 1331 թ. (տե՛ս նոյն տեղում, էջ 231):



- Եղբայրներից կրտսերը Աղբուղան է, որը ծնուել է 1301 թ. յետոյ, քանզի նա չի վկայուած Գոնցա իշխանուհու վերոբերեալ արձանագրութեան մէջ: Աղբուղայի մահուան թուականը եւս ստույգ յայտնի չէ: Նա չի յիշատակուած ո՛չ եղբոր՝ Էլիկումի 1346 թ. արձանագրութեան մէջ, ո՛չ էլ այլ վիմագրերում:
- Եղբայրներից համեմատաբար երկար է ապրել Էլիկում Օրբելեանը, որը քանիցս վկայուած է վիմագրերում եւ ձեռագիր մատենաներում: Նա յիշատակուած է 1301 թ. վանքի հիմնադրման վկայագրում եւ 1314, 1331 թթ. վերոբերեալ յիշատակարաններում: Արդէն 1346 թ. վիմագրում Էլիկումն, իբրեւ իշխան-տէր, նուէրներ է տալիս վանքին: Նա եւս մէկ անգամ վկայուած է 1348 թ.՝ իբրեւ Վեղի գետի միջին հոսանքներն ընդգրկող տարածքի եւ Արծ գիւղաքաղաքի տէր (տե՛ս Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, էջ 12-13):
- 11 Ս. Բարխուդարեան, Հայ կնոջ իրաւական վիճակը միջին դարերում, ՊԲՀ, 1966, ԸԽ 2, էջ 34:
 - 12 Ա. Ալպոյանեան, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրէ, 1950, էջ 354:
 - 13 Գետիկ անունը սկզբնաղբիւրներում վկայուած է բազմիցս: Մեր կարծիքով, քննարկուող վիմագրում յիշատակուածը կապ չունի Ջորափոր գաւառի նշանատր Գետիկ կամ էլ Նոր Գետիկ վանքերի հետ: Գետիկ անունով բնակավայր է յիշատակուած Վայոց ձորում՝ Տարսեի վանքին հարկատու գիւղերի ցուցակում, 12 չափ հարկով (տե՛ս Ստեփանոս Օրբելեան, 1861, էջ 372):
 - 14 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 4, Երեւան, 1948, էջ 287-288. տե՛ս նաեւ Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 738:
 - 15 Յ. Եղիազարեան, Յովհաննու Կարապետի վանքը..., էջ 62:
 - 16 Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք առաջին, Երեւան, 1957, էջ 309-310. տե՛ս նաեւ Գ. Գրիգորեան, Սիւնիքի վանական կայունատիրութիւնը IX-XIII դարերում, Երեւան, 1973, էջ 33: Վերջինս, որպէս սկզբնաղբիւր, օգտագործել է աւելադիկոս Յովհաննիսեանի բերուած գիրքը:
 - 17 Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, էջ 13-16:
 - 18 Ս. Բարխուդարեան, Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1968, էջ 146-147:
 - 19 Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, էջ 20:
 - 20 Նոյն տեղում, էջ 20:
 - 21 Գ. Գրիգորեան, Սիւնիքը Օրբելեանների օրօք (XIII-XV դարեր), Երեւան, 1981, էջ 228-229:
 - 22 Ժ. Դարի յիշատակարաններ, էջ 100:
 - 23 Ս. Բարխուդարեան, Միջնադարեան հայ ճարտարապետներ..., էջ 101-103:



- 24 Նոյն տեղում, էջ 103:
- 25 Այս եւ նախորդ (հարաւային) կցագիր արձանագրութիւնները նոյնութեամբ վերծանել են նաեւ նախորդ հրատարակողները (տե՛ս Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, էջ 22. Ս. Բարխուդարեան, Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, էջ 103): Վերջինս ճիշտ է վերծանել նաեւ հիւսիսային պատուհանի կցագիրը՝ բաց թողնելով արեւմտեանը: Գ. Յովսէփեանը չի վերծանել վերջին երկուսը:
- 26 Յ. Եղիազարեան, Յովհաննու Կարապետի վանքը եւ նրա վիմագիր արձանագրութիւնները, էջ 62:
- 26ա Յուշարձանախմբի ճարտարապետական վերլուծութիւնը եւ չափագրութիւնները կատարել է ճարտարապետ Սարգիս Ծահնեանը:
- 27 Մանուկի թաղման ժամանակ հիւֆեր դնելու օրինակ է յայտնի միջնադարեան Հայաստանի նշանատր մայրաքաղաք Անիի պեղումներից: 1908 թ. Անիի Ծաղկաձորին մերձակայ քարայրներից մէկում քաղաքի սեծահարուստ Տիգրան Հոնենցի տոհմական գերեզմանոցում յայտնաբերուել է մանկական թաղում: Այստեղ գտնուել են երեխայի ամբողջական հագուստը, բողբ, բարձի երեսը, ոսկեթել երկու դեկորատիւ գործուածք, արդուարդի առանձին աւարկաներ (տե՛ս Ի. Օրբելի, Каталог Ангийского музея древностей, вып. I. Описание предметов первого отделения, СПб, 1910, ст. 32-35):
- 28 1840 թ. յուլիսի 19-ին Էջմիածնի սինոդին գրուած գեկուցագրում Ջնջրլուի Ս. Կարապետը յիշատակուած է աներուած վանքերի շարքում եւ նշում է, որ միակ զոհը Գրիգոր քահանայի նշում էր (տե՛ս Հայաստանի Հանրապետութեան պատմութեան կենտրոնական արխիւ (այսուհետեւ՝ ՊՊԿԱ, ֆոնդ 56, գոյք 1, գործ 781, տուհետեւ՝ ՊՊԿԱ, ֆոնդ 56, գոյք 1, գործ 781, թերթ 6): Թէ՛ւ փաստաթղթում չի նշուած քաղաքի հարսին երեխայ ունենալու մասին, սակայն Ջնջրլուի բնակիչները մինչեւ օրս աւանդաբար պատմում են երկրաշարժի ժամանակ երիտասարդ հարսի եւ իր նորածին մանկան մահուան մասին եւ վանքի բակում թաղուած լինելու հանգամանքը: Մինչեւ անգամ ճշգրտօրէն ցոյց են տալիս թաղման տեղը:
- 29 Սրանք ունեն քառանկիւն հիմք, որի վրայ բարձրանում են կամարներով աւարտուող չորս սիւններ: Կամարներից վեր քառանկիւն վերնամասն է, վրան վերելի քարակոթողը ազդեցելու փոստակով բարձիկը:
- 30 Գ. Կարախանեան, Գ. Սարգսեան, Յ. Մելքոն-Գ. Կարախանեան, Հայաստանի վաղ նեան, Պ. Յարութիւնեան, Հայաստանի վաղ միջնադարի նորայայտ յուշարձաններ, ԲԵՀ, 1992, թիւ 2, էջ 163:
- 31 Գ. Յովսէփեան, Տարսայիճ Օրբելեանի եւ Միհայ Խաթունի սերունդը, էջ 22:
- 32 ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 9059:
- 33 Սիմեոն Երեւանցի, Ջամբո, էջ 280:



- 34 Կ. Կոստանեան, *Օարժի տարեգրութիւն հայոց մէջ*, Թիֆլիս, 1902. Վ. Ստեփանեան, *Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում եւ նրա մերձակայքում*, Երեւան, 1964:
- 35 ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 780, թերթ 6:
- 36 Նոյն տեղում, թերթ 28:
- 37 Նոյն տեղում, գործ 6370, թերթ 4:
- 40 Նոյն տեղում, թերթ 5:
- 41 ՀՀ ՊՊԿԱ, գործ 9059, թերթ 16:
- 42 Նոյն տեղում:
- 43 Նոյն տեղում, թերթ 17:
- 44 «Արարատ», Վաղարշապատ, 1901, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 480: Վանքը եւս մէկ անգամ յիշատակում է 1898 թ. մի յօդուածում, ուր խօսում է նրա յարմար դիրքի, հիմնադրման ժամանակի եւ տարեկան եկամուտների մասին (տե՛ս «Նոր-դար», 1898, թիւ 81, էջ 2): «Արարատ» ամսագրում Հայ Առաքելական Եկեղեցու Երե-


ւանի գաւառի Ռարալագեազի բարեկարգութեան կազմում մտնող բնակավայրերի ցուցակում 52 համարի տակ յիշատակում է Ջնջրլում՝ իր Ս. Սարգիս եկեղեցով (տե՛ս «Արարատ», թիւ Թ, շրջան ԺԲ, Վաղարշապատ, 1879, էջ 351):

45 ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1926, թուղթ 2: Կայ եւս մի փաստաթուղթ, որը վերաբերում է 1855-1862 թթ.: Այստեղ խօսք է գնում Օարուրի գաւառի Ջնջրլու գիւղի Ս. Կարապետ եկեղեցին թալանելու մասին (ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 3323): Ջնջրլում յիշատակուած է եւս մէկ անգամ XX դ. սկզբին տարածաշրջանի բնակավայրերի շարքում: Ըստ վկայութեան՝ գիւղն ունէր 108 տուն՝ 1227 բնակչութեամբ, եւ իր մօտ էր «Ս. Յովհաննու Մկրտչի անուամբ մենաստանի մը աներակները» (տե՛ս Հ. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հտ. Ա, Վեճեսիկ, 1903-05, էջ 784-785):










1

2


U 1:2




3



U 1:3



4



5




6

U 1:2



7



8




9




10



11



12



1




U 1:3



2




U 1:2



3




U 1:3



4



U 1:3



5



U 1:2

